


**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**Ամենայն Հայոց Կաթողիկոսը
հանդիռեց սարքեր ոլորսներում
հաջողություններ արձանագրած
երիտասարդների հետ**



Մեր արտադրվա աղոթքն ենք վերառա-
քում առ Բարձրյալն Աստված, որ Իր բա-
զում ողորմությունները շնորհի ազգիս
հայոց, Սուրբ Հոգու սփոփանքը պարզեցի
վշտացյալ արտերին եւ Իր գթառատությունն
ու պահպանությունը տալածի աշխարհաս-
փյուռ մեր ժողովրդի ու մեր հայրենիքի վրա:
Թող Աստծո բարի հայացքի ներքո Տիրոջ
գորակցությամբ իրականություն դառնան
մեր ժողովրդի բարի իղձերը՝ ներդություննե-
րից ու դժվարություններից հառնելու դեպի
բարձունքը հաղթանակների եւ հաջողու-
թյունների՝ ի գորացումն մեր պետության եւ
ի բարօրություն ազգիս: Եվ թող մեր Տեր եւ
Փրկիչ Հիսուս Քրիստոսի սերը եւ երկնա-
պագեւ շնորհները միշտ լինեն մեզ հետ եւ
ամենքի. ամեն:



Կերգուն՝ Նորին Արքեպիսկոպոսն աղոթք բարձրացրեց Հայաստանի, Արցախի եւ հայ ժողովրդի խաղաղ ու ապահով կյանքի համար՝ հորդորելով երիտասարդներին իրենց աշխատասիրությամբ ու գիտելիքներով նորանոր հաջողություններ արձանագրել՝ ի փառս ու բարօրություն հայ ժողովրդի եւ հայտնի երկրի։

Հարություն վրդ. Կիրակոսյանը, ազատվելով վանորեից տեսչությունում ստանձնած պարտականություններից, իր ծառայությունը կշարունակի Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրենի պաշտոնում:


Սուրբ Պատարագ եւ շնորհաբաժնություն Սուրբ Ղեւոնդյանց փահանաների տոնի առիթով



քին. Մարգարյանին, Կոտայքի թեմից՝ Յայկազ քին. Մատյանին, Գեղարքունյաց թեմից՝ Նշան քին. Մարգարյանին, Վայոց ձորի թեմից՝ Սեպուհ քին. Յարությունյանին, Գերմանիայի հայոց թեմից՝ Տիրատուր քին. Մարգարյանին, ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդությունից՝ Պսակ քին. Սկրտչյանին, Հակոբ քին. Գրիգորյանին եւ Գալուստ քին. Սահակյանին:

Քահանայական լանջախաչ կրելու իրավունքի արժանացան ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդությունից Վարազդատ քին. Նաջարյանը եւ Գյուտ քին. Գալստյանը, Շիրակի թեմից՝ Մակար քին. Գալստյանը եւ Նարեկ քին. Անտոնյանը, Կոտայքի թեմից՝ Համազասպ քին. Հազեյանը, Գեղարքունյաց թեմից՝ Սիմեոն քին. Հովհաննիսյանը, Գուգարաց թեմից՝ Լեւոն քին. Դավթյանը եւ Վաղարշ քին. Հակոբյանը, Մասյացոտնի թեմից՝ Գեւորգ քին. Աբյանը եւ Արտաշէս քին. Հակոբյանը, Արցախի թեմից՝ Բենիամին քին. Ծատուրյանը, Երեւանի Ա. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցուց Աշոտ քին. Աբրահամյանը:

Շնորհաբաժնության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հոգեւորականաց դասին բերեց իր օրհնությունն ու հայրապետական պատգամը: Ջերմագին շնորհավորանքներն ուղղելով հոգեւոր դասին տոնի առիթով՝ Հայոց Հովվապետը մաղթեց, որ Ղեւոնդյանց ոգով շարունակեն իրենց առաքելությունը եւ արժանի լինեն մեր սուրբ հայրերի ժառանգը կոչվելու, ազգին ու հայրենիքին մատուցած ծառայությանց համար արժանանան նաեւ սերունդների գնահատանքին եւ մեծարանքին: Վեհափառը նաեւ իր



Փետրվարի 9-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տոնախմբեց Ս. Ղեւոնդյանց քահանաների հիշատակը: Այս առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում էին համախմբվել 230 եկեղեցական, որոնց թվում՝ 13 թեմակալ առաջնորդ, Մայր Աթոռի 29 միաբան եպիսկոպոս, վարդապետներ եւ արեղաներ եւ Հայաստանի թեմերից ու Արցախից ժամանած 188 քահանա:

Տոնի կապակցությամբ Վաղարշապատ քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Պատարագ: Պատարագիչն էր Արարատյան հայրապետական թեմի՝ Երեւանի Դավթաշենի Սրբոց Նահատակաց եկեղեցու հոգեւոր հովիվ Խորեն քին. Մարությանը:

«Սուրբ Պատարագի միասնական եւ ընդհանրական աղոթքի մեջ գտնվելով՝ մասնավոր եւ առանձնահատուկ զգացողություններ ենք ապրում, որովհետեւ հնարավորություն է ընձեռված մեզ հոգեւոր ծառայության քահանայական ուխտը վերանորոգելու, առավել արժեւորելու դարերի խորքից եկող «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց»-ի խորհրդով ապրելու հոգեւոր ապրումներն ու առաքնությունները»,— ընդգծեց իր քարոզում Խորեն քահանան՝ երախտագիտություն հայտնելով Վեհափառ Հայրապետին Ս. Էջմիածնի հյուրընկալ ջերմության ներքո վերստին գտնվելու հնարավորության համար:

Անդրադառնալով օրվա խորհրդին՝ տեր հայրը մասնավորապես նշեց. «...Ղեւոնդյանց եւ Վարդանանց հերոսամարտի հիշատակումը մեր ազգային արժանապատվության բարձր գիտակցության, հայրենասիրության, աստվածսիրության, նահատակության եւ գոյության հարատեւության պատմությունն է: Այսօր մենք մի հայի համար հայրենիքը, եկեղեցին, լեզուն, հազարազանգ իր մշակույթը պահելու ուխտը վերանորոգելու լավագույն օրն է:

...Ղեւոնդյանց եւ Վարդանանց հերոսամարտը լույս մի ոյուցազնական դրվագ է, այլ դարեդար ապրող, ներշնչող, կազմակերպող մի ուժ, մի ոգի, հրեղեն մի սյուն՝ հայոց երկնակամարի վրա միշտ բոցավառվող, որն առաջնորդել է մեր ժողովրդին իր պատմության քառուղիներում: Դրա շնորհիվ է, որ այսօր կանք, ապրում ենք»:

Խոսելով մեր օրերի հերոսամարտի մասին՝ պատարագիչն ընդգծեց. «Վերջին պատերազմին մենք ունեցանք նահատակներ եւ խոնարհվում ենք նրանց նահատակության ոգու առջեւ: Նրանք բոլորն էլ Ղեւոնդյանց եւ Վարդանանց հերոսական ոգով լցված նահատակվեցին վասն հայրենյաց՝ իմացյալ մահով: Որքան էլ որ դառն եղավ մեզ համար պատերազմի ելքը, մենք իրավունք չունենք հուսահատվելու: Ինչպես Ղեւոնդյանց եւ Վարդանանց նահատակների թափված արյան գինը եղավ մեր գոյության հարատեւությունը, այնպես էլ արցախյան պատերազմի նահատակների զոհաբերության գինը եղավ երկրորդ անգամ ցեղասպանության չենթարկվելու առիթավառչան»:

Տոնի առիթով տեր հայրը սրբերի բարեխոսության հայցով իր շնորհավորանքները բերեց ներկաներին՝ մաղթելով. «Թող Աստված բոլորիս իմաստություն պարգևի, ուժ, կարողություն, որպեսզի մեր նախանձախնդիր եւ նվիրյալ ծառայությամբ, առանձնահատուկ ջերմությամբ մեր ժողովրդին առաջնորդենք Ավետարանի կյանքով, Հիսուս Քրիստոսի պատգամներով եւ պատ-

վիրաններով, Նրա սիրո վարդապետությամբ, որպեսզի մեր միջից վերանա անմիաբանության հազկերտը, անտարբերության եւ անհանդուրժողականության հազկերտը, հակառակության եւ ատելության հազկերտը, մեր ինքնության հետ առանջություն ունեցող հոգեւոր եւ ազգային ժառանգությունը մերժող հազկերտը, եկեղեցու դերն ու նշանակությունը չգնահատող ու չարժեւորող հազկերտը, մոլություններով եւ այլասերվածությամբ ապրող հազկերտը, չապաշխարող եւ հոգեւոր փրկությունը չփնտրող հազկերտը, եւ վերջապես՝ չարությամբ եւ ոխակալությամբ ապրող վրեժխնդիր հազկերտը: Ղեւոնդյանց եւ Վարդանանց հերոսական ոգին մեզ համար թող լինի մի-մի հատուկ գեներ, որպեսզի կարողանանք բոլոր ժամանակների «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» նահատակների երազանքները եւ պատմական արարությունը վերականգնենք ու հաստատենք»:

Սուրբ Պատարագի ավարտին Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ քահանաների հավաք եւ պարգևաբաշխություն: Ողջույնի խոսքով հանդես եկավ քահանաների հավաքի կազմակերպիչ հանձնախմբի պատասխանատու Միքայել Եպս Աջապահյանը: Այնուհետեւ տեղի ունեցավ ավանդական շնորհաբաշխությունը: Ի գնահատություն Հայոց եկեղեցու անդաստանում երկարամյա վաստակի, նվիրյալ եւ արդյունավոր հովվական ծառայության՝ մի շարք եկեղեցականների շնորհվեցին ավագ քահանայության պատիվ, ծաղկյա փիլոն եւ լանջախաչ կրելու իրավունք:

Ավագ քահանայության պատվի արժանացան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառույցներում սպասավորող քահանաներ Խորեն Կիրակոսյանը, Պարույր Ավետիսյանը, Վահրամ Մելիքյանը, շնորհավորանքը բերեց պարգևների արժանացած եկեղեցականներին՝ ընդգծելով, որ հպարտ է հանձնառությամբ ու նվիրումով ծառայություն իրականացնող եկեղեցականաց դասով:

Նորին Սրբությունն ընդգծեց, որ ձեռավորված գեղեցիկ ավանդույթի համաձայն՝ հոգեւոր սպասավորները համախմբվում են Մայր Աթոռում ոչ միայն ապրելու տոնի հոգեւոր խնդրությունը, հիշատակելու եւ հայցելու Ղեւոնդյանց սրբերի բառերով:



Աղան Մակարյանը, Ֆրանսիայի հայոց թեմից՝ Տիրայր Գրընժյանը:

Ծաղկյա փիլոն կրելու իրավունք շնորհվեց Արարատյան հայրապետական թեմից քահանաներ Բաբկեն Հայրապետյանին, Գրիգոր Գրիգորյանին, Թովմա Անդրեասյանին, Եմափոն Ղեւոնդյանին, Զգոն Աբրահամյանին, Վահան Առաքելյանին, Արարատ Օրդոյանին, Տավուշի թեմից՝ Սիմեոն քին. Առաքելյանին եւ Թորգոմ

այն առաքելությամբ, որին կոչված են, համեմատելու իրենց գործունեությունը Ղեւոնդյանց քահանաների ծառայության եւ ոգու հետ, տեսնելու՝ արդյո՞ք հավատարմորեն պահում են նույն ընթացքը: Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքով՝ Ղեւոնդյանց պատմական իրողությունից՝ Ավարայրի դաշտում Հազկերտին դիմակայող հոգեւորականներին, վերածվել են խորհրդի, որով «Ղեւոնդյանք» ասելով՝ հասկանում ենք դարերի

մեջ գործած ու ծառայած, այսօր եւս պաշտոնավարող եկեղեցականներին, որոնք արժանավորապես, իրենց կոչումի գիտակցությամբ, խոր հավատքով, Քրիստոսի ու հայրենյաց սիրով իրենց ծառայությունն են բերում մեր ժողովրդին, մեր Սուրբ եկեղեցուն եւ հայրենիքին: Նորին Սրբությունը շնչեց, որ բոլոր ժամանակներում՝ թե՛ ազգային կյանքի վերելքի շրջաններում եւ թե՛ մեր ժողովրդի դժվարին փորձությունների պահերին, մեր հոգեւոր հայրերը եկեղեցականին արժանի բարձրության վրա են գտնվել:

Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձ կատարեց ներկա բարդ իրավիճակին՝ բերելով իր արդթքն ու խոնարհումը քաջարի զավակներին, որոնք իրենց կյանքն ընծայեցին մեր հայրենիքի պաշտպանության սրբազան գործին, հարգանքը՝ արիասիրտ բոլոր զինվորներին ու հրամանատարներին: Նորին Սրբությունը նաեւ բարձր գնահատեց պատերազմի օրերին առաջնագծում եւ թիկունքում հայ եկեղեցականների դրսեւորած ոգին ու նախաձեռնասիրությունը: Առկա ծանր պայմաններում Հայոց Հայրապետը կարեւորեց եկեղեցականների առաքելությունը՝ ժողովրդին արիությամբ գոտեպնդելու, որպեսզի, ինչպես ողջ պատմության ընթացքում Քրիստոսի հանդեպ հավատով մեր ազգը մերժել է վախն ու հուսահատությունը, այսօր եւս կորստյան ցավն ու տրտմությունը մեր ժողովուրդը կարողանա հաղթահարել եւ հույսով, հավատով ու լավատեսությամբ լցվել զաւիթի նկատմամբ:

«Այսօր եւս կուգեն նաեւ իմ հորդորն ու պատգամը բերել ձեզ՝ բոլորիդ, որպեսզի շարունակեք ձեր ծառայությունը նույն բարձր գիտակցությամբ ու պատասխանատվությամբ, նույն արի ոգով եւ հանձնառությամբ: Դժվարին ժամանակների մեջ ենք, բազում փորձություններ են ծառացած մեր ժողովրդի առջեւ: Եվ այս ժամանակներում կարեւոր դերակատարություն է վերապահված մեր եկեղեցուն եւ մեր եկեղեցականությանը: Պիտի կարողանանք դժվարին այս իրավիճակից դուրս գալ, եթե քաջությամբ ու արիությամբ իրականացնենք մեր առաքելությունը իբրեւ եկեղեցի եւ իբրեւ եկեղեցականություն: Մենք պիտի կարողանանք ճիշտ պատգամներ բերել մեր ժողովրդին,

ապահովել ճիշտ առաջնորդություն: Պիտի կարողանանք արիությամբ սաստել սխալը, վատը, չարը, անօրենք եւ քաջալերել, խրախուսել եւ գնահատանքի ու մեծարանքի արժանացնել բարին, արդարը, ազնիվը, ճշմարիտը, հայրենամկերը, ազգաշենն ու աստվածօրհնյալը: Միայն այդպես կկարողանանք այս ծանր իրավիճակից դուրս բերել մեր ժողովրդին ու մեր երկիրը»,— ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ կարեւոր նկատելով, որ հայ եկեղեցականը չտարվի ժամանակի հողմերով, այլ նրա հայացքը միշտ ուղղված լինի դեպի հավերժ ընթացքը:

Վերջում Հայոց Հայրապետը հայցեց, որ Տերն Իր շնորհներով զորացնի մեր եկեղեցականությունը, որպեսզի շարունակեն իրենց օգտակար ու

գնահատարժան ծառայությունը ազգին ու հայրենիքին եւ այս ժամանակների համար նույնպես իրենց սպասավորությամբ պանծացնեն Հայ եկեղեցու անունն ու հեղինակությունը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Աստված Իր օրհնությունը եւ գորավոր Աջը հովանի դարձնի մեր հայրենիքի եւ մեր ողջ ժողովրդի վրա՝ հաղթանակով, հույսով եւ աներկբա հավատով դուրս գալու այս դժվարին ժամանակներից:

Սուրբ Պատարագ Սուրբ Վարդանանց տոնի առիթով



Փետրվարի 11-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին ոգեկոչեց Ս. Վարդանանց զորավարների եւ 1036 վկաների հիշատակը:

Այս առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը, գլխավորությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ներկա գտնվեց Սուրբ Գայանե վանքում մատուցված Պատարագին: Պատարագին էր Մայր Աթոռի արարողակարգի եւ արտաքին հարաբերությունների բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Սրբազան արարողության ընթացքում Նաթան արքեպիսկոպոսը նաեւ քարոզեց ս. Վարդանանց խորհրդի մասին՝ մանրամասնորեն անդրադարձ կատարելով ժամանակի պատմական հանգամանքներին, երբ հայերը մինչեւ արյան վերջին կաթիլը դիմադրեցին եւ պաշտպանեցին իրենց ազգային ինքնությունը, հավատքը եւ եկեղեցին:

«Ավելի քան 15 հարյուրամյակ է անցել այն օրվանից, երբ նրանք իրենց սխրամբն ու քաջությունը բերեցին հայրենիքի ու ազգի համար հայտնի Վարդանանց պատերազմում եւ Ավարայրի ճակատամարտում: Այս դարերի ընթացքում հայ ժողովուրդը բազում պատերազմներ ու ճակատամարտեր է ունեցել, բայց Ավարայրի ճակատա-

մարտն իր հատուկ, ուրույն տեղն ունի մեր պատմության եւ ժողովրդի հոգում, սրտում եւ առօրյա կյանքում:

...Հատ կարելու է մեր պատմության, մեր մտքի ու գիտակցության համար այն, որ հենց Ավարայրի ճակատամարտով էր, որ տեղի ունեցան հայ ժողովրդի սրբացումը

եւ Հայ Առաքելական Մայր Եկեղեցու հերոսացումը: Եվ 15 դարեր այսպես սրբացած ու հերոսացած, որպես մեկ միավոր, որպես մեկ ժողովուրդ ապրում ենք այս աշխարհում: 1500 տարի է անցել Ավարայրի ճակատամարտից, սակայն, ցավոք, 1500 տարվա հողովույթի մեջ նույնիսկ չի մարել այդ պայ-

քարը: Հայոց Ավարայրը շարունակվում է եւ այսօր», – ասաց Նաթան սրբազանը՝ նշելով, որ այսօր էլ հայ ժողովուրդը հարկադրված է պաշտպանել իր ինքնությունը, դավանած եւ կերտած արժեքներն ու քրիստոնեական ոգին:

Տոնի առիթով հոգեւոր դասի եւ ողջ հավատացյալ ժողովրդի անունից սրբազանը շնորհավորեց Նորին Սրբությանը՝ անվանակոչության օրվա առիթով եւ մաղթեց խաղաղություն եւ քաջություն՝ շարունակելու այսօրվա Ավարայրը եւ հաղթելու այն: Սրբազանը ցանկացավ, որ Տերն իր ուժը առատապես պարգևի Հայոց Հովվապետին, որպեսզի նրա հայրապետական գավազանը միշտ բարձր լինի եւ առաջնորդի ազգին դեպի ապագա հաղթանակներ, դեպի աստվածային օրհնություն:

Սուրբ Պատարագի ավարտին կատարվեց Հայրապետական մաղթանք, որի ընթացքում աղոթք վերառաքվեց առ Աստված հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հավերժ պայծառության եւ Ամենայն Հայոց Հայրապետի կենաց արեւշատության եւ արդյունալի գահակալության համար:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
տեղեկատվական համակարգի



ԱՄՆ-ի հայոց արեւմտեան թեմում

Արցախի յուշարձաններու Պահպանութեան յանձնախումբ

Թեմի առաջնորդ Յովնան արք. Տերտեանի նախաձեռնութեամբ 2020 թ. դեկտեմբերի սկզբնաւորութեան կազմուեցաւ Արցախի մշակութային ժառանգութեան պահպանման յանձնախումբ: Յանձնախումբի առաքելութիւնն է հետապնդել բոլոր այն կրօնական, մշակութային ու պատմական արժեք ունեցող յուշարձաններու պահպանումը, որոնք Արցախի յետպատերազմեան կարգավիճակով ու նոյեմբեր 9–10 2020 թ. հրադադարի յայտարարութեամբ անցան Ազրայեճանի վերահսկողութեան ներքոյ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ, Վեհափառ Հօր յանձնարարութեամբ, կազմուեցաւ յատուկ գրասենեակ ու աշխատակազմ, գլխաւորութեամբ հայր Գարեգին Համբարձումեանի, որու ջանքերը պիտի ըլլան ի մի հաւաքել եւ ցանկագրել, դասաւորել բոլոր յուշարձաններու օրինական, իրաւագիտական ու պատմական փաստաթղթերը, հրամցնել միջազգային կառոյցներուն՝ հետամուտ ըլլալով անոնց պաշտպանութեանը: Այս սրբազան առաքելութիւնը յաջողցնելու համար կարիք կար ընդհանուր ցանկը ունենալ բոլոր այն յուշարձաններուն, վանքերուն, եկեղեցիներուն, մատուռներուն, խաչքարերուն, որոնք այժմ դիտարկուել կործանման ու չեզոքացման վտանգին մէջ են: Հայր Գարեգինի ջանքերով այդ մարմանասնեալ ցանկը

պատրաստուեցաւ, որմէ կարելի է հետեւցնել, որ առ այսօր Արցախի մեր կրօնապատմական յուշարձաններէն մօտ 4403-ը այժմ վտանգուած են՝ նկատի ունենալով ազերի հակահայ անընդունելի վարքագիծը նախորդ տասնամեակներուն: 4403-էն 128-ը կարելու է վանքեր, եկեղեցիներ են:

Արեւմտեան թեմի՝ Արցախի յուշարձաններու պահպանման այս յանձնախումբը իր անդրադիմ ժողովը գումարեց դեկտեմբեր 7 2020-ին ու մինչեւ օրս կը գումարուի կանոնաւորապէս՝ մասնակցութեամբ ԱՄՆ-էն ու Եւրոպայէն մասնագէտ, իրաւագէտ ու կարող հայ եւ օտար անհատներու:

Ներկայիս յանձնախումբի ժողովները կ'ընթանան չորս բեւեռներու վրայ:

Ա.— Աշխատիլ միջազգային հանրութեան եւ կազմակերպութեանց հետ՝ յուշարձաններու պահպանման գործը հսկողութեան կիզակէտին վրայ պահելու համար: Դիմել միջազգային կառոյցներու, ինչպիսիք են. WMF, Blueshield, UNESCO, որոնց գլխաւոր առաքելութիւնը նման յուշարձաններու անխաթար պահպանումն է:

Բ.— Օրինական ու փաստագրական փաստաթղթերու վերադասաւորում եւ հրատարակութիւն:

Մայր Աթոռի կողմէ կազմուած գրասենեակ, գլխաւորութեամբ հայր Գարեգին Համբարձումեանի, այդ աշխատանքները ներկայիս սկսած են: Միաժամանակ նաեւ

կը պատրաստուի յատուկ առցանց կայք, ուր նման հրատարակութիւնները, յօդուածներն ու աղբիւրները պիտի թարգմանուին տարբեր լեզուներու եւ հրապարակուին:

Գ.— Գտնել, բացայայտել ու վերահրատարակել Արցախի վերաբերեալ սկզբնաղբիւրները՝ թարգմանելով զանոնք տարբեր լեզուներու՝ ներառեալ թրքերէնի, արաբերէնի եւ այլն: Նաեւ քաջալերել, յանձնարարել նոր յօդուածներու գիտական ուսումնասիրութիւնը՝ միջազգային հարթակներուն հրամցնելու համար: Հայր Գարեգին ներկայիս կ'աշխատի Մատենադարանի երիտասարդ գիտնական խմբի մը հետ այս գործով:

Դ.— Միջազգային գիտական համագումարներ կազմակերպել՝ միջազգային, ակադեմիկ ու քաղաքական գործիչներու ուշադրութիւնը հրաւիրելու եւ Արցախի յուշարձաններու պահպանման գործն աւելի բարձր մակարդակի հասցնելու համար:

Արեւմտեան թեմի կողմէ կազմուած յանձնախումբը, վերջին հաշուով ու կրկին սրբազան հօր ջանքերով, ընդլայնուեցաւ՝ համագործակցելով Արեւելեան թեմի ջանքերով կազմուած յանձնախումբի աշխատանքներուն: Սրբազան հօր յանձնարարութեամբ՝ Արեւմտեան թեմը ներկայացնող ու երկու թեմերու աշխատանքները համադրող նշանակուեցան Բագրատ Ծ. վրդ. ու դոկտ. Ռէշլը Կոչկարեանը: Յանձնախումբի անդամներու թիւը եւս քանակապէս մեծ-

ցաւ՝ իր մէջ ներառելով նաեւ Աւստրիոյ, Մեծն Բրիտանիոյ առաջնորդներու մասնակցութիւնն ու ներդրումը յիշեալ սրբազան առաքելութեան:

Յանձնախումբի անդամներու նուիրուած աշխատանքը պէտք է խոստովանիլ, որ բացառիկ ընթացքի մէջ է, ու արդէն կազմուած են ենթայանձնախումբեր՝ կազմակերպելու շարք մը համագումարներ, առայժմ առցանց կարգավիճակով, ուր պիտի շօշափուին իրաւագիտական, պատմական ու մշակութային կարելորութիւնները Արցախի մեր պատմամշակութային ու կրօնական յուշարձաններուն: Միւս կողմէ՝ սրբազան հօր նախաձեռնութեամբ նաեւ կապեր հաստատուած են ճափոնի դեսպանին հետ, Ճայրագոյն Արեւելքի երկիրներուն հետ յիշեալ հարցով մօտենալու համար:

Յանձնախումբի բազմաճիւղ աշխատանքները համադրելու եւ աւելի արդիւնաբեր գործունեութիւն ծաւալելու համար, 1 փետրուար 2021-ի ժողովին իբրեւ արդիւնք, բոլոր յանձնախումբերու կողմէ երկու ներկայացուցիչներ պիտի համադրեն յանձնախումբերու Արեւմտեան, Արեւելեան, Եւրոպայի, Ռուսաստանի եւ Մայր Աթոռի աշխատանքները: Սոյն յանձնախումբն իր անդրադիմ ժողովը պիտի գումարէ յառաջիկա օրերուն ընթացքին:

Դիւան առաջնորդարանի

ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆ

Մուշեղ Գալշոյանն իր ստեղծագործական կյանքն ապրեց 1960–1970-ական թթ.: Գրական տեսակետից ընդհանուր առմամբ աշխույժ տասնամյակներ էին, բայց նաև տարիներ, երբ ամեն մի արժեքավոր գործի համար անհրաժեշտ էր մաքառել, քանի որ սահմանափակված էին ստեղծագործական ազատության շրջանակներն ու ինքնադրսետումն հնարավորությունները: Հավատալիքներն ու գրաքննությունը հետևողականորեն շարունակվում էին համադրվել ամեն ինչ՝ ջանալով գեղարվեստական մտածողությունը հարմարեցնել գաղափարական պատրաստի ինչ-ինչ կաղապարների: Թվում է, թե կարելի էր գրել ամեն ինչի մասին, բայց չէր կարելի անցնել թույլատրելի սահմանը: Դա բավարար էր նորին միջակայքում, որը բուռն թափով ծաղկեց հատկապես այդ տարիներին, եւ պատմե՜լ էր ամեն մի լուրջ ստեղծագործողի ճանապարհին: Բանաստեղծական ժողովածուները, որպես օրենք, պետք է բացվեին առաջնորդին ու կուսակցությանը հասցեագրված ձևերով, մվիրումի հավաստիացումներով: Իսկ նրանք, ովքեր նոր ասելիք պիտի բերեին, պարտավոր էին սպասել: Այդ տարիներին արգելվեց Պ. Սեւակի «Եղիցի լույս»-ը, խոսք անգամ չէր կարող լինել Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր»-ը: Հայաստանում տպագրելու մասին, գգոցներում պիտի մնային Լեռ Կամսարի սրամիտ պատմվածքները, մեծ աղմուկ պիտի բարձրանար Հ. Մաթևոսյանի «Ահմիճոր» ակնարկի շուրջ, տարիներով պիտի ձգձգվեր Խ. Դաշտենցի «Ռանչպարների կանչ»-ը վիպասքի տպագրությունը եւ, ի վերջո, լույս տեսներ գրողի մահից հետո, հրատարակչությունները պիտի մերժեին Հ. Շիրազի «Հայոց դանթեականը»:

Հեշտ չէր նաեւ Մ. Գալշոյանի համար: Ցավով տեսել եմ նրա դառնացած հայացքն ու լուռ զայրույթը, երբ «Մարութա սարի ամպերը» պատմվածաշարի մի քանի գործներով էին տպագրել նաեւ իր ջանքերով հիմնադրված «Գարուն» ամսագրում: Ժամանակին մերժվել էր նաեւ Արփա-Սեւան ջրատարի մասին պատմող նրա «Պորտալար» ակնարկը, որովհետեւ հեղինակը հանդգնել էր թափանցել անթույլատրելի սահմանը: Հեշտությամբ լույս աշխարհ չի եկել նաեւ «Ազնավաքար»-ը, որի նախնական տարբերակը «Գարուն» ամսագրում լույս տեսավ խմբագրության տարակարծություններն արտահայտող հետգրությամբ:

Լուսավորյալ ժամանակներ էին, բայց Լուսավորչի կանթեղին ձեռք մեկնելը հեշտ չէր: Ամեն ինչ արվում էր պայքարի գնով: Այդ պայքարի մեջ էր նաեւ Մ. Գալշոյանը, այդ պայքարի մեջ էլ անցավ նրա կյանքը: Ժողովրդի հիշողության մեջ XX դարի ողբերգության խորհրդանշաններ են 1915, 1937, 1949 թվականները: Դրանք այդպես էլ խարանձավ կմնան պատմության ճակատին: Բայց երեք լուսավոր ստեղծագործողի համար տխուր խորհրդանշանի վերածվեց նաեւ 47 թիվը: Այդ տարիքում աղետալիորեն իրենց մահկանացուն կնքեցին բանաստեղծ Պ. Սեւակը, գեղանկարիչ Մ. Ավետիսյանը եւ արձակագիր Մ. Գալշոյանը: Առաջին երկուսը զոհ գնացին ավտովթարին, երրորդը՝ իր իսկ որոտրոգական հրացանի կոյր կրակոցին:

Ո՞վ էր Մ. Գալշոյանը, որտեղից էր գալիս եւ ի՞նչ էր գնում: Կենսագրական մանրամասներն այս դեպքում եւս լրացնում են գրողի ստեղծագործական նկարագիրը:

Մուշեղ Հովսեփի (Հովհաննեսի) Մանուկյանը ծնվել է 1933 թ. դեկտեմբերի 13-ին Հայաստանի Թալինի շրջանի Կաթնաղբյուր գյուղում: Նրա ծնողները, ինչպես նաեւ գյուղի եւ շրջանի բնակչության զգալի մասը, որոնց միջավայրում անցավ նրա կյանքը, Արեւմտյան Հայաստանի Սասունի գավառից այդ վայրերն էին ներգաղթել 1915–1920 թթ.: Գաղթականների դժվարին կյանք, քարքարոտ երկիր, ծանր ու հոգսաշատ առօրյա, երբ պետք էր մաքառել մի կերպ ապրելու, գոյությունը պահպանելու եւ մարդկային ու ազգային տրորված արժանապատվությունը վերականգնելու համար:

Ինչպես մյուսների, այնպես էլ Մուշեղ Մանուկյանի տոհմական արմատներն ուժեղ էին: Դա այն տոհմն էր, որ հայրենիքի պաշտպանության համար դարասկզբին տվել էր նվիրյալ ազատամարտիկներ: Եվ նրանց մեջ՝ Գալշոյի Մանուկը՝ Մուշեղի պապը, Փեթարա Իսրոն՝ Մուշեղի մորեղ-



բայրը: Ըստ Մ. Գալշոյանի վկայության՝ վերջինս մինչեւ 47 տարեկանը տառաճանաչ չի եղել: Դրանից հետո է միայն սովորել հայոց տառերը եւ գրել ազատամարտիկների կյանքի պատմությունը: Ահա «Մամփրե արքան» պատմվածքի հերոսի նախակերպարը: Իսկ Փեթարա Իսրոյի կյանքի պատմությունն ավարտվել է նրանով, որ 1927-ին աքսորել են որպես կուլակ (*տես «Քազին», 1981, թիվ 1*):

Մուշեղի հայրը՝ Հովսեփ (1880–1977), գաղթի ճանապարհին ամեն ինչ կորցնելուց հետո իր մեջ ուժ գտավ նոր բնակավայրում հիմնելու նոր օջախ, իր նման գաղթական Հոռնեի հետ առաջացած տարիքում կազմելու նոր ընտանիք եւ նորոգելու իր բնավեր տունը:

Մանկության ու պատանեկության տարիներին Մուշեղը լսել է հոր ու համագյուղացիների պատմությունները կորուսյալ ծննդավայրի մասին, ոգեշնչվել հայրենիքի պաշտպանության համար ուղիքի ելած հերոսների պայքարով եւ իր մեջ թանձրացրել հայրենի եզերքի կորստի ցեղական դարավոր թախիծը, կարոտի մորմոռը: Դա էլ հետագայում նրան մղեց վերագտնելու իր տոհմի ժառանգորդական հիմքերը եւ Մանուկյան ազգանունը փոխելու Գալշոյանով:


Բնաշխարհի ու բնաշխարհիկ մարդկանց միջավայրում հասակ առած պատանին միջնակարգ կրթություն ստացավ հայրենի գյուղում: Ակամա մտաբերվում են Հարենցի «Հարենց-նամե» պոեմի տողերը.

*Եվ հենց նա էր, թախիծն հնամյա,
Որ ծածկած արեւ ու Իրան –
Մի ծերուկ ուսուցչի ուման
Ինձ մի օր վարժարան տարավ:*

Գյուղի վարժարանից հետո գրողը բռնեց մայրաքաղաքի ճանապարհը՝ դարձավ Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտի այգեգործական բաժանմունքի ուսանող: 1957-ին ավարտելով բարձրագույն դպրոցը՝ կարճ ժամանակով նախ աշխատանքի անցավ Մեղրու շրջանում, ապա՝ Աշտարակի շրջանի Կոչ գյուղի մեքենատրակտորային կայանում: Այնուհետեւ՝ 1958–1960 թթ., աշխատեց շրջանի նորաստեղծ տնտեսություններից մեկում՝ որպես փորձադաշտի գյուղատնտես: Այսքանով ավարտվում է Մ. Գալշոյանի աշխատանքային գործունեության նեղմասնագիտական շրջանը:

Հայտնի է, որ պատանեկան տարիներին նա գրել է բանաստեղծություններ, քնարական պատկերներ: Ստեղծագործական հակումներ ունեցող երիտասարդն այդուհետեւ անցնում է լրագրային աշխատանքի՝ ջանալով դրանով իսկ բավարարություն տալ իր գրական նախասիրություններին: 1960–1961-ին աշխատում է Թալինի շրջանային «Կոմունիզմի դրոշմով» (այն տարիների շրջանային թերթերից շատերի անվանումները կամ կոմունիզմի դրոշով եւ ուղիով էին, կամ լեհիմիզմի): 1961–1962-ին տեղափոխվում է Աշտարակի «Արագած» միջշրջանային թերթ: Այնուհետեւ նա վերջնականապես հաստատվում է Երեւանում եւ լրագրային գործունեությունը շարունակում «Ավանգարդ» թերթում, ուր 1964–1967 թթ. վարել է գրական աշխատողի, գյուղատնտեսության բաժնի վարիչի պաշտոններ: Այս տարիներին մեծապես ընդարձակվում է նրա աշխարհագրական տեսադաշտը: Գործուղումներով լինում է Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում եւ հերթական ակնարկների հետ մեկտեղ բերում նաեւ կենսական իմացությունների պաշարներ: «Ավանգարդ»-ից հետո բաժնի վարիչի պաշտոնով նա հրավիրվում է աշխատելու նորաստեղծ «Գարուն» ամսագրում: Դրանք 1967–1969 թվականներն էին: «Գարուն»-ում պաշտոնավարել է նաեւ 1971–1975 թթ.: Իսկ միջանկյալ երկու տարիներին (1969–1971) ուսանել է Մոսկվայի Մ. Գորկու անվան գրական ինստիտուտի բարձրագույն դասընթացներում:

→ էջ 7



Սկզբը՝ 2020-ի թիվ 18–24, 2021-ի թիվ 1–2

Թոթովենցի վերոհիշյալ դրամայի խոսքարվեստում բառերը, կապակցությունները, փոխելով իրենց խոսքային միջա-

մատությունների ներգործում ուժը դրանց ինքնատիպությունն է: Հաճախ երկու առարկաների կամ երեւոյթների համեմատության հիմքում ընկած հատկանիշը նոր

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑԸ

վայրը, արտաքին միեւնույն ձեւով ստանում են միանգամայն նոր ու անսպասելի իմաստներ: Ամեն ինչ ձեռք է բերում հոգեբանական եւ զգացմունքային երանգ, իսկ բառերն ու պատկերները հասնում են հույզի ու ներապրումի բառերն թարգմանությամբ:

Գեղարվեստական խոսքի հուզականությանը նպաստում են նաեւ համեմատությունները, որոնք նպաստում են գեղարվեստական պատկերն ավելի խորությամբ ընկալելուն: Համեմատությունը պատկերավորման այն միջոցներից է, որի կառուցվածքն ու բովանդակային մասը մեծապես պայմանավորված են ստեղծագործողի գեղարվեստական մտածողության շրջանակներով: Թոթովենցյան համեմատությունների ներգործում ուժը դրանց ինքնատիպությունն է: Հաճախ երկու առարկաների կամ երեւոյթների համեմատության հիմքում ընկած հատկանիշը նոր

ու անսպասելի է լինում ընթերցողի համար, որի միջոցով էլ ոճական հնարանքը ինքնատիպ արժեք է դառնում խոսքաշարում, ինչպես օրինակ՝

1. «Օսմանյան կայսրությունը չի ունեցել նման հավատարիմ ծառաներ, ինչպես իմ պնդիմը եւ տագրը» (նույն տեղում, էջ 382):
2. «Բայց մարդիկ կան, որոնք կայսրությանը այնքան մեծ ծառայություններ են մատուցել, որ նրանց բոլոր մեղքերը, միասին կշռած, ավելի թեթեւ են, քան ուրիշների ծառայությունները» (նույն տեղում, էջ 284):
3. «Ժամանակը անգույն կերպով բոցավառում է անպատված լինելու զգացումը: Խարույկի նման, նման անշիջանելի մորեմուն, վառվում է ապտակը իմ հոգու մեջ» (նույն տեղում, էջ 317):
4. «Որքան մեծ է դժբախտությունը, այնքան մեծ է Հաջի Հելեբու ուժը» (նույն տեղում, էջ 314):
5. «Իմ բոլոր իմացած հնարները չքանում են օձառի պղպաղակների նման» (նույն տեղում, էջ 314):

Թոթովենցի՝ դիմանկարներ կերտելու վարպետությունն առավել խորքային արտահայտություն է ստանում վերջին շրջանում գրված ստեղծագործություններում: Այս փուլում լեզվամիջոցների, հատկա-

պես բառընտրության հարցում Թոթովենցը դրսևորում է լեզվական ճկունություն եւ նուրբ ճաշակ: Եվ հեղինակի, եւ կերպարների խոսքի համար գրողն ընտրում է հստակ բառամիջոցներ, որոնք իրենց տարբերություններով եւ բազմազանությամբ ստեղծում են լեզվական հարուստ միջավայր, որտեղ հայրենի գրական երկու տարբերակները ներկայանում են հնարավոր շքեղությամբ: Իբրեւ դեպքերի ականատես կամ պատմող, որ հաճախ համընկնում է հեղինակի խոսքին, գրողը կարծես մասնակից է դառնում ամեն մի իրադարձության, պատմելու պարզ եւ անկաշկանդ եղանակով, համոզիչ եւ դիպուկ նկարագրություններով ստեղծում բնական ու կենդանի խոսքային միջավայր: Այս առումով «Նոր Բյուզանդիոն» դրաման տարբերվում է մյուս ստեղծագործություններից: Դիմանկարային նկարագրություններ գրեթե չկան դրամայում: Փոխարենը տրվում են կերպարների հոգեբանական բնութագրեր:

Այսպիսով՝ «Նոր Բյուզանդիոն» դրամայում, ինչպես պատմական անցյալին նվիրված այլ ստեղծագործություններում Թոթովենցը գեղարվեստորեն հաստատեց լավի, գեղեցիկի, բարու եւ մարդկայինի իր որոնած արժեքները: ➔ էջ 5

Մյունյաց ուսումնագիտական կենտրոնների ավանդը հայ մշակույթի անդամսանում (V–XII դդ.)


Սկիզբը՝ թիվ 2

Մյունյաց վարդապետարանի ակադեմիկոս Ռուսուցապետներից է Մաթուսաղան։ Նա զբաղեցրել է մաե Մյունյաց եպիսկոպոսական աթոռը (634–652 թթ., ըստ Յ. Քյոսեյանի՝ Մաթուսաղան Մյունյաց եպիսկոպոսական աթոռին զահակալել է 634–643 թթ.) եւ հռչակված էր որպես նշանավոր աստվածաբան, իմաստասեր եւ քերթող, ճարտասան ու մեկնիչ։ Մաթուսաղան Մյունյաց վարդապետարանի սաներից էր, իսկ հետագայում մաե գլխավորեց այս նշանավոր ուսումնագիտական կենտրոնը։ Մաթուսաղան իր գործուն մասնակցությունն է բերել Հայոց երկրի եկեղեցաքաղաքական կյանքին։ Հովհան Մայրապետեցու հետ մա հանդես է եկել իբրեւ Հայոց եկեղեցու դավանական եւ քաղաքական անկախության նախանձախնդիր պաշտպան։ Պատմիչ Օրբելյանը խորին ակնածանքով ու գովեստով է արտահայտվել Մաթուսաղայի մասին։ «Այս Մաթուսաղայ էր սմեալ ամենայն պարկեշտութեամբ. ուսեալ զքերթողութիւնն եւ վարժեալ ճարտասանականն. հմտացեալ փիլիսոփայական արուեստից, լի ամենայն իմաստութեամբ եւ կատարեալ գիտութեամբ»։ Մաթուսաղայի գլխավորած Մյունյաց վարդապետարանում ուսանել են հետագայում նշանավոր դարձած շատ մեծանուն հոգեւոր-մշակութային գործիչներ։ Ռուսուցապետ Մաթուսաղայի եւ Մյունյաց վարդապետարանի հռչակի մասին է վկայում այն փաստը, որ հայոց Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսը (615 – 628 թթ.) իր եղբորորդի Թեոդորոս Քոթեմալորին ուսանելու է ուղարկում ոչ թե կաթողիկոսական դպրեւանք, այլ Մյունյաց վարդապետարան։

Քերթողի՝ փիլիսոփայի մեծ հռչակ եմ-թաղել է տալիս, որ Մաթուսաղան գրել է շատ աշխատություններ։ Սակայն, ցավոք, Բյուզանդիայի Հերակլ կայսրին ուղղված թուղթը (մամակ) նրանից մեզ հասած միակ երկն է, որը, բարեբախտաբար, ժամանակին մտել է Տոմարակ կամ Ճառնուտի ժողովածուներ (բայց այսօր հայտնի գրչագրերում այն բացակայում է), իսկ հետո գետեղվել Ստեփանոս Օրբելյանի Պատմության մեջ (գլ. ԴԾ)։ Իսկ ի՞նչ առիթով է գրվել այդ թուղթը։ 633 թ. Կարինի ժողովին մասնակցելու համար իշխան Թեոդորոս Ռշտունին եւ նախարարները հայոց կաթողիկոս Եզր Ա Փառաժնակերտցուն (630–641 թթ.) խորհուրդ են տվել հույների հետ դավանա-

կան խնդիրներում ճիշտ կողմնորոշվելու նպատակով իր հետ տանել Մաթուսաղային եւ Հովհան Մայրապետեցուն՝ որպես գիտուն աստվածաբանների։ Մաթուսաղան, չցանկանալով թողնել վարդապետարանի գործը եւ պատճառաբանելով տկարությունը, Կարին է ուղարկել իր աշակերտ, Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսի եղբորորդի Թեոդորոսին՝ հայոց դավանության մասին բյուզանդական Հերակլ կայսրին ուղղված իր թղթով։ Դա Հերակլ կայսրի՝ հայերին ուղարկած դավանական գրի պատասխանն էր։

Ահա այդ ժողովում ընթերցվելու նպատակով Մաթուսաղան Հերակլ կայսրին է հղում վերոհիշյալ թուղթը։ Թղթում բացատրվում է հիմնավորվում է Հայոց եկեղեցու դավանանքը, մասնավորապես՝ քրիստոսաբանությունը։ Մաթուսաղան հերքել է եվտիբականությունը, նեստորականությունը, քաղքեղոնականությունը, անդրադարձել երեւութականության, անապականության խնդիրներին։ Հեղինակը խոսում է «Երգ երեքսրբեմի» («Սուրբ Աստված») սրբասացության մեջ «խաչեցար»-ի հավելման մասին եւ հիմնավորում այդ հարցում Հայոց եկեղեցու ուղղափառությունը։ Անդրադառնալով այն մեղադրանքներին, թե Հայոց եկեղեցին «Աստված խաչված» եւ «անմահին խաչված» է ասում, Մաթուսաղան պատասխանում է, որ այստեղ ոչ մի հերետիկոսություն չկա, քանզի «անչարչարը չարչարվեց չարչարողով, անմահը մեռավ մահկանացուով, այսինքն թե՛ անչարչար Բանն Աստված մեռավ իր մարմնով»։ Մաթուսաղան շեշտել է, թե աստվածային եւ մարդկային անքակտելի եւ անճառելի միավորությամբ է, որ ասում ենք «Աստված խաչվեց» կամ «Աստված չարչարվեց», հետեւաբար, «ով չի ասում «Աստված խաչված», չի էլ ընդունում Աստծուն Կույսից ծնված, իսկ Կույսին Աստվածածին... քանի որ Հիսուս Քրիստոսը ուրիշ մեկը չէ, Բանն Աստված՝ ուրիշ, այլ՝ նույն եւ մեկ Աստվածն է՝ ծնված Կույսից, իր աստվածությամբ նույն անչարչարելին, նույն անմահն ու նույն մեռածն իր մարմնով»։ Այս հիմամբ հաստատելով «Աստված խաչված» եւ «անմահ խաչված» ծիսական բանաձեւի կիրարկման անհրաժեշտությունը՝ Մաթուսաղան վկայակոչում է Քաղկեդոնի ժողովին մասնակցած Հոբնաղ երուսաղեմցուն։ Ըստ վերջինիս՝ այդ բանաձեւը, իբրեւ ծիսական կայուն ընթերցված, հնուց անտի կիրառվել է երուսաղեմյան «Պատարագատույցի» մեջ։ Սրանով Մաթու-



սաղան շեշտում է բանաձեւի վաղնջական ծագումը եւ վավերականությունը։ Ընդհանրապես Մաթուսաղան Հայոց եկեղեցու ուղղափառությունը դավանական տարբեր հարցերում հիմնավորել է Ս. Գրքից վկայակոչումներով եւ եկեղեցու հայրերի գրվածքներից մեջբերումներով։

Մյունյաց վարդապետարանի երախտաշատ եւ բազմարդյուն ուսուցչապետներից է Մովսես Քերթողը (Մովսես Մյունեցի)։ Նա VII դ. երկրորդ կեսի նշանավոր հոգեւոր-մշակութային գործիչ է, քերական, մեկնիչ, աստվածաբան, թարգմանիչ, ծիսագետ եւ երաժիշտ-տեսաբան։ Ըստ պատմիչ Օրբելյանի՝ Մովսես Քերթողը Մյունյաց եպիսկոպոսական աթոռին զահակալել է յոթ տարի։ Մովսես Քերթողին աշակերտել են Թեոդորոս Քերթողը, Եզրաս Անգեղացին։ Թեոդորոս Քերթողը թերեւս նույն Թեոդորոս Քոթեմալորն է, որը պետք է դառնար նշանավոր Հովհան Իմաստասեր Օծնեցու (հայոց կաթողիկոս՝ 717–728 թթ.) ուսուցիչը։ Իսկ Եզրաս Անգեղացին իր մեծանուն ուսուցչի նման հայտնի է դարձել ճարտասանության դասերով եւ կրթել բազում աշակերտներ։

Բացի մանկավարժական բեղուն գործունեությունից՝ Մովսես Քերթողը զբաղվել է նաեւ մատենագրությամբ։ Դատելով նրան վերագրված եւ վերագրելի երկերի բովանդակությունից եւ լեզվաոճական որակից՝ քաջատեղյակ է եղել հունարենին, մասնա-

վորաբար՝ եռյակ գիտություններին՝ քերականությանը, հռետորությանը եւ իմաստասիրությանը։

Մովսես Քերթողին են վերագրվում մի շարք թարգմանություններ, մեկնություններ, ճառեր, աղոթքներ եւ այլ գործեր։ Պահպանվել է Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ» երկի՝ Մովսես Քերթողի գրած մեկնությունը, որն աչքի է ընկնում առհասարակ արվեստի եւ մասնավորապես՝ քերականական արվեստի ռացիոնալիստական ըմբռնումներով։ Արժեքավոր է Մովսես Քերթողի «Յաղագս կարգաց եկեղեցույ» գրվածքը, որտեղ հայ միջնադարյան երաժշտատեսական մտքի պատմության մեջ առաջին անգամ տրված է հայկական ութայն համակարգի զուտ եկեղեցական շրջանակներում ձեւավորված նորովի գեղագիտական մեկնությունը։

Մովսես Քերթողին են վերագրվում նաեւ հետեւյալ շարականները. Աստվածահայտության ճրագալույցի, Ծննդյան կամ Աստվածահայտության, ԱԶ–ԴԿ՝ Խանդերձ Մեծացուցեցերով, Տյառնընդառաջի եւ Վերափոխման Ա ավուրն։ Մովսես Մյունեցու շարականներն աչքի են ընկնում ոչ միայն քերթողական արվեստին բնորոշ անուրանալի արժանիքներով, այլեւ աստվածաբանական նուրբ ձեւակերպումներով։

→ էջ 6

ԴՐԱՄԱՏՈՒՐԳ

← էջ 4 Գրողը հայտնաբերեց մարդկային-հոգեկան աշխարհի այնպիսի շերտեր, որոնք հոգեբանական առումով հաղորդակցվում են մեծ աշխարհի հետ՝ համամարդկային կշիռ ու որակ ստանալով։ Դրամայի հերոսները պայքարում են անհրաժեշտ բարեքի ղեմ, փորձում են վերականգնել արդարությունն ու ճշմարտությունը։ Դրամայի գլխավոր հերոս Հաջի Չելեբին մարմնավորում է գրողի՝ մարդու ազատության, ազնվության, խղճի ու ճշմարտության իդեալը։ Նա ստիպված հրաժարվում է սիրելի ընտանիքից, բայց կարողանում է լուծել իր վրեժը Իսխելից։ Դրամայի պլոտեն զարգանում է երկու կերպարների՝ Հաջի Չելեբի ամիրայի կամ երկանյան Հովհաննեսի եւ նրա ոխերին թշնամի Իսխել հրեայի միջեւ։ Իսխելն է սուլթանին ու պալատական վերնախավին բամբասել, նրա հրամանով են կախաղան բարձրացվել Տոնգյան եղբայրները։ Իսխելն անգթաբար ցանկանում է գրավել եղբայրների հարստությունը։

Թոթովենցը դրամատիկական երկեր գրել է իր ստեղծագործության վերջին շրջանում՝ արձակ եւ չափածո փորձերից ուղիղ մեկուկես տասնամյակ հետո։ Պատճառը հիմնականում դրամայի ժանրային առանձնահատկություններով էր պայմանավորված։ Արդիականության հրատապ

պահանջների հետ կապված բազմաթիվ խնդիրներ է բարձրացնում գրողն իր դրամաներում, որոնց մի մասն անհետացել է գրողի ձեռքակալությունից հետո։ Թոթովենցը թատրոնի եւ դրամայի հարցերին անդրադարձել է իր հոդվածներում։ Գրողն ընդգծել է թատրոնի դաստիարակչական դերը, անդրադարձել է նշանավոր դերասանների գործունեությանը եւ այլն։ «Թատրոնը Ամերիկայում», «Պետական առաջին տասնամյակի առթիվ», «Արուս Ոսկանյան», «Հասմիկ», «Ֆիգարոյի ամուսնությունը», «Օթելլո» եւ այլ հոդվածներում հանդես է բերել համաշխարհային դրամատուրգիայի խոր իմացություն, ցույց տվել բուրժուական աշխարհի բարոյական անկումը։ Գրողի մեծագույն ցանկություններից մեկն էլ այն էր, որ թատրոնն ազատվեր բուրժուական արվեստի ավանդներից ու ճիրաններից։

Դրամատիկական երկերի միջոցով Թոթովենցն արտացոլել է Պոլսի իրականության բնորոշ կողմերը, ստի ու փառասիրության վրա խարսխված բարքերն ու օրենքները։ Տեսնելով մարդկային անհրաժեշտությունները՝ գրողը փորձել է գեղարվեստական խոսքով պաշտպանել մարդկային բարձրագույն արժեքները, որոնց անդրադարձել է իր դրամաներում, մասնավորապես «Նոր Բյուզանդիոն» ստեղծագործության մեջ։



Տարբեր են Թոթովենցի դրամաների հերոսները. նրանք մեծատուններ են, արհեստավորներ, տարբեր խավի մարդիկ։ Սակայն մի քանի նրբագիծ բնորոշումներով գրողը կարողանում է ինքնատիպ դիմանկարներ կերտել, որոնք վկայություն են նրա բարձր վարպետության, բառագործածության հմտության եւ քնարական նուրբ զգացողության։

Թոթովենցն այն գրողներից է, որը պատ-

մական շրջանի կյուրիոսը ներկայացնելու համար գերազանցորեն կիրառում է ոչ միայն համապատասխան բառապաշար, այլեւ ոճական արժեքով օժտված պատկերավորման միջոցներ՝ այդպես ստեղծելով մի ինքնատիպ աշխարհ, ուր ընթերցողը գտնում է իր սիրելի հերոսին։ Անդրադառնալով լեզվաոճական առանձնահատկություններին՝ նշենք, որ բառապաշարը հիմնականում արելեւիաայերեն է։ Ոճական նկատառումներով տեղ-տեղ հանդիպում են բառային հնաբանություններ։ Գեղարվեստական պատկերներին արտահայտչականություն են հաղորդում մակդիրները, փոխաբերությունները, համեմատությունները եւ այլն։ Ոճական նշանակալի արժեքով օժտված փոխաբերությունների կիրառությունները պայմանավորված են հերոսների տրամադրությամբ ու ապրումներով, ուստի առավելապես հանդես են գալիս որպես հոգեկան բարդ ապրումներ ու զգացումներ արտացոլող ոճական միջոցներ։ Խոսքի լեզվաոճական հարստացմանը նպաստում են նաեւ ժողովրդախոսակցական բառաշերտին պատկանող բառերի կիրառությունները։

Մերի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆՑԱՆ (1830–1892)



Սկիզբը՝ 2020-ի թիվ 18–24, 2021-ի թիվ 1–2

«ԱՉԱՏ ԵՐԳԵՐ»

Ռատոնառության, մանկավարժական աշխատանքի եւ տեղից տեղ փոխադրվելու հետեւանքով Պատկանյանի գրական գործունեությունն ունեցել է ժամանակավոր կարճատեւ ընդհատումներ: 1867 թ. Նոր Նախիջեւանում վերահաստատվելուց հետո՝ 1870-կանների սկզբից, նա ժամանակավոր տեղատվություն ապրեց, նույնիսկ գրիչը վայր էր դրել վճռաբար: Սակայն համաժամանքներն ստիպեցին, որ նա սամալվանդ 1875-ից հետո վերադարձի իր ստեղծագործական ոգետրությունը՝ նոր թափով գրելով թե՛ չափածո, արձակ էջեր, թե՛ կատարելով դրամատիկական փորձեր:

Նրա հայրենասիրական քնարի համար ստեղծագործական նոր ու հզոր ազդակ եղավ 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմը, որը հայությանը սնեց թուրքիայի բռնակալական լծից Արեւմտյան Հայաստանի ազատագրության նոր հույսերով, սակայն ավելի մեծ եղան դառն հուսախաբությունները:

Ստեղծվել էր Արեւմտյան Հայաստանի ազատագրության համար պատմական թվացյալ բարենպաստ պահ: Սակայն մեծ տերությունների քաղաքական հակասություններն ու տնտեսական շահերը խափանեցին հայության սպասելիքների իրականացումը: Թուրքիայի կործանումը եւ թուրքահայատակ եվրոպական ազգերի նման՝ արեւմտահայերի ազատագրումն ու հայկական հարցի բարեհաջող լուծումն ավելի հավանական էին, քան այն, ինչ եղավ:

Բոլոր դեպքերում՝ հայությունը չէր կարող իրեն դուրս դնել աշխարհաքաղաքական այն իրադարձություններից, որոնք պիտի վճռեին իր ճակատագիրը: Ժամանակի բոլոր ողջամիտ գործիչների նման՝ Պատկանյանը գիտակցում էր ճակատագրական պահի լրջությունը եւ մեծ կարեւորություն էր տալիս իր գրական ստեղծագործություններին: Նորից նրա մեջ արթնացան բանաստեղծելու ազնիվ կիրքը, հայությանը բարոյական ու հայրենասիրական դաստիարակությամբ համագալսելու միասնական մեկ նպատակի շուրջ համախմբելու ձգտումը: Բայց եթե առաջին շրջանում գրած ազգային-հայրենասիրական բանաստեղծությունները նա «մարտնչելներ» էր անվանում, ապա պատերազմական իրականության թելադրանքով գրելիք երգերը «ռակետներ» էր կոչում եւ խոստանում ողջ Արեւմտյան Հայաստանն ընդգրկող եւ տարբեր բարբառներով երգերով հայությանը նախապատրաստել թուրքական բռնությունից պատմական բնօրրանն ազատագրելու վճռական դեպքերին:

1875 թ. Բոսնիայի եւ Հերցեգովինայի

սլավոնների ապստամբությունը թուրքական տիրապետության դեմ այդ բռնակալության դարավոր լծի տակ տառապող հայության համար քաջալերիչ խթան էր, իսկ երկու տարի անց սկսված ռուս–թուրքական պատերազմը Արեւմտյան Հայաստանի ազատագրության իրական հույսեր էր արթնացրել: 1870–1880-ական թթ. այս իրողությունները Պատկանյանին ոգեշնչեցին գրելու 33 նշանավոր ռազմերգերի այն շարքը, որը վերնագրված է «Ազատ երգեր»: Այն լույս տեսավ Թիֆլիսում 1878 թ. «Փորձ» ազգային հանդեսի հրատարակությամբ եւ խլվեց ձեռքեծեռ՝ որպես հայ երիտասարդության ապրելու բանաձեւ եւ գործունեության ծրագիր:

Բայց չափազանց բուռն էր նաեւ Պատկանյանի ոգետրությունը. նույնիսկ պատերազմի ավարտից ու 1878 թ. Բեռլինի վեհաժողովի հակահայ որոշումներից ու հերիմյան Հայրիկի՝ հարիսայի ու «թղթ շերտի» պատկերավոր պատմությունից հետո էլ նա չհուսահատվեց, գրեց նույն շարքում դրվելու արժանի ավելի քան երկու տասնյակ նոր ռազմերգ, չիրաժարվեց թեկուզ կյանքի գնով հայրենիքն ազատագրելու իր ծրագրից եւ դեռ 1889 թ. էլ գրեց Հայաստանի ազատագրության «Կարդապետարան» ծրագրային երկը:

«Ազատ երգերը» եւ նրան հարակից բանաստեղծությունները այսօր անկասկածաբար կարելի է բաժանել թեմատիկ մի քանի հիմնախմբերի. մեկում՝ հայության անտանջելի, օրհասական վիճակը պատկերող բանաստեղծություններն են («Մշեցու հեկեկանքը», «Նարիք մշեցի», «Վանեցի գեղջուկի տաղը», «Տաճկահայերի օրհաս», «Վանեցոց աղոթքը», «Թալանած գեղ», «Վանեցի մոր երգը», «Կարիքի կոտորած» եւ այլն), մյուսում հայ մարդու հոգին թունդ հանող զինված պայքարի մոլեգին մարտակոչներն են՝ հեղինակի ասած «ռակետները» («Երդունք», «Վանեցի կտորիճ», «Հույս», «Նոր տարի» (1879), «Ո՛հ խնդիր, ո՛չ հրաման», «Մշեցոց մոր սերունդ», «Հայ զինվոր» եւ այլն), երրորդում՝

երգիծական կծու բանաստեղծություններ են՝ ուղղված ազատագրական պայքարից խուսափող մեծահարուստներին ու թուլամորթներին, Թուրքիային ու նրան հովանավորող եվրոպական տերություններին:

Չի կարելի ասել, թե Ռ. Պատկանյանն այնքան էր ռոմանտիկ, որ հաշվի չէր առնում «իրաց հանգամանքը» եւ անխոհեմաբար հայությանն առաջնորդում էր դեպի անիմաստ զոհաբերություն: Ընդհակառակը, բանաստեղծը տեսնելով համոզվել էր, որ հայության ավելորդ խոհեմությունն անցյալներում ոչ մի օգուտ չէր տվել, հայության խաղաղասիրական բոլոր ջանքերն ապարդյուն էին անցել, ժողովրդի համբերությունն սպառվել էր արդեն, իսկ թշնամին «ամոթ, գութ ու խիղճ» չունեւ, ուրեմն՝ բիրտ ուժերի հետ ճակատագրական բախումը, ինքնապաշտպանական մաքառման գոյամարտն անխուսափելի էին, որոնց, սակայն, պետք էր նախապատրաստվել՝ անզեն ժողովրդին զինելով ու պատերազմի վարժեցնելով: «Նարիք մշեցի» բանաստեղծության հերոսը, երկրեերկիր թափառելով, աղերսելով, զենք է հայթայթում, որովհետեւ առանց զինված դիմադրության՝ հնարավոր չէր թուրքի եւ քրդի ասպատակությունների ու զազանությունների դեմն առնել:

Բայց մենք ձեր սնդուկի փարին կարոտ չենք, —
Հայ աղբարը, շնորհեցեք դուք մեզ մեկ-մեկ գենք:

«Վանեցի մոր երգը» բանաստեղծության տողերում նա հայ–թուրքական հարաբերություններն այսպես է բնութագրել.

Մենք Սուլթանին շատ խնդրեցինք
կողկողազին ու լացինք,
Աղի-աղի արտասուքով ձեռք ու ոտը
վլացինք,

Բայց նա չանսաց պաղատանքին ողորմելի
հայերուն,
Այժմ, նայինք, նա կը լսե՞ շառաջյունը
սուրերուն (1, 112):

→ էջ 8

Սյունյաց ուսումնագիտական կենտրոնների ավանդը հայ մշակույթի անդաստանում (V–XII դդ.)

→ էջ 5


Սովսես Սյունեցու անունով ձեռագրերում հանդիպում են նաեւ աղոթքներ, որոնցում աղերսներ են նկատվում արեւելաքրիստոնեական վաղաստվածախոսական ավանդների հետ:

Հայ հին մատենագրության մեջ Սովսես Քերթով Սյունեցին նույնացվել է Սովսես Խորենացու հետ: Թերեւս այդ շփոթի հետեւանքով է, որ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանում «Սովսես Քերթով» բառահոդվածի հեղինակ Ա. Արեւշատյանը Սովսես Սյունեցու մասին գրում է. «Հայ առաքելական եկեղեցու տոմարի սուրբ: ...Հայ եկեղեցին ս. Սովսես Քերթովի հիշատակը նշում է Խաչվերացի հինգերորդ կիրակիին նախորդող շաբաթ օրը՝ «սրբոց թարգմանչաց վարդապետաց» տոմի հետ, հոկտեմբեր ամսին»: Մենք, այնուամենայնիվ, կարծում ենք, որ Սուրբ Թարգմանիչների հետ տոնախմբվում է ոչ թե Սովսես Քերթով Սյունեցու, այլ պատմահայր Սովսես Խորենացու հիշատակը:

Սյունյաց վարդապետարանի թերեւս ամենահռչակավոր ուսուցչապետն է Ստեփանոս Սյունեցին (Ստեփանոս Քերթով, Երկրորդ), որը նշանավոր մատենագիր էր, աստվածաբան, իմաստասեր, ճարտասան, մեկնիչ, թարգմանիչ, քերական, երաժիշտ, բանաստեղծ, եւ ժամանակակիցները նրան մեծարում էին «սին երկնի, խարիսխ հաւատոյ» խոսքերով: Նա Դվինի ավագերեց Սահակի որդին էր, ծնվել է մոտ 660–670-ական թթ. եւ եղերակաճորեն մահկանացուն կնքել 735 թ. հուլիսի 21-ին: Նախնական կրթությունն ստացել է Դվինի կաթողիկոսարանի դպրոցում, ապա ուսու-

մը շարունակել Մաքենյաց վանքի դպրոցում՝ աշակերտելով Սողոմոն Մաքենացուն, այնուհետեւ սովորել է Սյունյաց վարդապետարանում՝ աշակերտելով Սովսես Քերթովին: Նորանոր գիտելիքներ ձեռք բերելու եւ ուսումը կատարելագործելու տենչը հագեցնելու նպատակով Ստեփանոս Սյունեցին մեկնել է Կ. Պոլիս, այնուհետեւ՝ Աթենք, սովորել է հունարեն, լատիներեն, ուսումնասիրել աստվածաբանություն, փիլիսոփայություն, երաժշտություն եւ այլ գիտություններ: Մոտ 728 թ. Ստեփանոս Սյունեցին վերադարձել է Հայաստան, դասավանդել Դվինի կաթողիկոսարանի դպրոցում, ծավալել մանկավարժական եւ մատենագրական բեղմնավոր գործունեություն: Ապա ձեռնադրվել է եպիսկոպոս եւ կարգվել Սյունյաց մետրոպոլիտ: Պատմիչ Օրբելյանը մեծ ոգետրությամբ ու ակնածանքով է խոսում Ստեփանոս Սյունեցու մասին. «Սրտիս գործարանի բուռն բաղձանքը դրո՛ւմ է միտքս՝ իմ այս շարադրանքի մեջ հոմերական քերթողությամբ ստեղծագործել, հորինել եկեղեցուն գեղեցիկ տողեր, հյուսել ախորժալուր գովեստներ՝ բոլորի սիրելի մերբողումը հոժարական լսողների ականջներում թնդացնելու համար: Նկատի ունեմ բոլոր եկեղեցից անհամեմատելիին, իմաստունին եւ սերովբեներից սպասարկված Աստծու մարդուն՝ Ստեփանոս իմաստասերին եւ անհաղթ հռետորին՝ Սյունյաց մետրոպոլիտին...»:

Բարունապետ Ստեփանոս Սյունեցին թողել է գրական մեծածավալ ժառանգություն՝ մեկնողական, դավանաբանական աշխատություններ, թարգմանական երկեր, հոգետր երգեր, տաղեր: Նրա անունով մեզ



հասած երկերից հատկապես նշանավոր են «Մեկնութիւն չորից Աւետարանչացն», «Պատճառք եւ թելադրութիւնք Առաջին տեսչեանն Եզեկիէլի», «Մեկնութիւն Դանիէլի», «Մեկնութիւն Յոբայ», «Մեկնութիւն Արարածոց», «Մեկնութիւն քերականին», «Մեկնութիւն ժամակարգութեան» աշխատությունները:

Ստեփանոս Սյունեցու «Մեկնութիւն չորից Աւետարանչացն» երկը Սյունյաց մեկնողական դպրոցի հին շրջանի՝ մեզ հասած միակ ամբողջական երկն է:

Շարունակելի

Արման ՄԱՆՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Նախիջևանի բարբառների Համապատկերը

Նախիջևանի տարածքը, ընդգրկելով պատմական Հայաստանի Վասպուրական աշխարհի Գողթն եւ Նախճավան, Այրարատ աշխարհի Շարուր, Սյունիք աշխարհի Ճահուկ եւ Երնջակ գավառները, լինելով տարբեր ազգագրական շրջանների խաչմերուկ, բազմիցս ենթարկվելով բնակչության զանգվածային տեղաշարժերի, օժտված է եղել բարբառային խիստ բազմազանությամբ:

Խորհրդային Ադրբեջանի՝ անցյալ դարում իրականացրած հայատյաց քաղաքականության հետևանքով ոչ միայն իսլամ հայաթափվեց ողջ երկրամասը, ոչ միայն ամբողջովին ոչնչացվեցին տարածքի հայ մշակույթի բազմահազար հուշարձանները, այլև իրենց իսկ բնօրրանից արմատախիլ լինելով՝ ոչնչացան հայերենի մի ամբողջ խումբ բարբառներ:

Հայ ժողովրդի համար բախտորոշ 1918–1920 թթ. իրադարձությունների նախօրյա-

(Յարմջա), Հաջիվար, Մամարգա Դիգա, Մոխրաբլուր (Քյուլթափա), Նազարապատ, Շմթան, Վերին Ըզնոբա, Տամբատ (Թմբուլ) եւ Քյարիմբեկ Դիգա գյուղերը, իսկ Մարաղայի բարբառով՝ 3 բնակավայր՝ Գողթն գավառի արաքսամերձ Վերին Ազա, Ներքին Ազա եւ Դեր գյուղերը:

Չնայած Նախիջևանի բնակչությանը վիճակված բազմաթիվ զանգվածային տեղաշարժերին՝ տարածքում, այնուամենայնիվ, պահպանվել էին նաեւ տեղաբնիկ բարբառներ. Ազուլիսի բարբառով խոսում էր 7 բնակավայր՝ Գողթն գավառի Վերին Ազուլիս ավանը, Ներքին Ազուլիս, Ցղնա, Տամակերտ, Քաղաքիկ, Համդամեջ եւ Դիսար գյուղերը, Ջուղայի բարբառով՝ 1 բնակավայր՝ Երնջակ գավառի Ջուղա գյուղը, Արարատյան բարբառով՝ 4 բնակավայր՝ Նախճավան գավառի Նախիջևան քաղաքը եւ Այլապատ, Աստապատ եւ Կարմիր վանք գյուղերը, Ճահուկ-Վայքի միջբարբառով՝ 2

«ուս» ճյուղին: Տարածքում առկա էին ինչպես երկաստիճան ձայնեղազուրկ, այնպես էլ եռաստիճան եւ քառաստիճան բաղաձայնական համակարգերով բարբառներ, ըստ որում՝ քառաստիճան համակարգ ուներ միայն Ջուղայի բարբառը, որտեղ առկա էին ձայնեղներ, խուլեր, շնչեղ խուլեր եւ շնչեղ ձայնեղներ, եռաստիճան՝ Արարատյան եւ Ազուլիսի բարբառները (ձայնեղներ, խուլեր եւ շնչեղ խուլեր), թեւեւ Ազուլիսի բարբառ համարվող Ցղնայի ենթաբարբառը վերոհիշյալ մյուս բարբառների (Արցախ-Սյունիքի, Ճահուկ-Վայքի, Հյուսիսային Գողթնի, Խոյի եւ Մարաղայի) նման ուներ բաղաձայնների երկաստիճան ձայնեղազուրկ համակարգ (խուլեր եւ շնչեղ խուլեր):

Ըստ Գեորգ Ջահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման՝ տարածքի բարբառները պատկանում էին հայերենի բարբառների արեւելյան խմբակցության արեւելյան կամ Ազուլիս-Մեղրու (Ազուլիսի, Հյուսիսային Գողթնի), հարավարեւելյան կամ Խոյ-Մարաղայի (Խոյի, Մարաղայի), հյուսիսարեւելյան կամ Արարատյան (Արարատյան) եւ ծայր հյուսիսարեւելյան կամ Արցախ-Շամախու (Սյունիք-Արցախի) բարբառախմբերին:

Բարբառային այս գունագեղության մեջ իր հատկանիշներով առանձնանում է բազմաթիվ ուսումնասիրողների ուշադրությունը գրավող՝ Ազուլիսի բարբառը կամ զոկերենը, որի առաջին տպավորությամբ խիստ անհասկանալի լինելը հետեւանք է ձայնավորների կրած գրեթե անճանաչելի փոփոխությունների, պարզ ձայնավորների դիմաց երկբարբառների առկայության, բայի խոնարհման մի շարք առանձնահատկությունների եւ այլն: Ազուլիսի բարբառը վերջնականապես մարեց 1989 թվականին, երբ իրենց բնօրրանից՝ պատմական Գողթն գավառի նշանավոր Ցղնա գյուղից արտաքսվեցին բարբառի վերջին կրողները:

Այդուհանդերձ, Ազուլիսի բարբառը հայերենի ամենավաղ եւ մանրամասն ուսումնասիրված բարբառներից է, որի մասին ինչպես հայ, այնպես էլ օտարազգի լեզվաբանները հողվածներ եւ ուսումնասիրություններ են հրապարակել դեռեւս 19-րդ դարի կեսերից (Հայնրիխ Պետերման (1866 թ.՝ գերմաներեն), Քերովե Պատկանյան (1868 թ.՝ գերմաներեն, 1869 թ.՝ ռուսերեն), սակայն Սարգիս Սարգսյանի եւ Հրաչյա Աճառյանի հիմնարար աշխա-




կին, երբ բնակչության մեծամասնությունը կազմում էին հայերը, Նախիջևանի տարածքն ընդգրկում էին շուրջ յոթ տասնյակ հայաբնակ քաղաք եւ գյուղ:

Անցյալ դարասկզբի Նախիջևանի հայ բնակչության վերաբերյալ առկա վիճակագրական-տեղագրական ուսումնասիրությունների, մասնավորապես՝ պատմաբան եւ վիճակագիր Ա.Դոյի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) «Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905–1906 թթ.)» հայտնի աշխատանքի ընձեռած տվյալների եւ տարածքում առկա խոսվածքների մասին երկար տարիների մեր հավաքչական աշխատանքների հիման վրա կազմել ենք Նախիջևանի գավառների հայ բնակչություն ունեցող բնակավայրերի բարբառների համապատկերը:

1605 թվականին շահ Աբասի կազմակերպած բռնագաղթի հետեւանքով գրեթե ամայնալուծ, մի քանի տասնամյակ անց աստիճանաբար հայերի կողմից մասամբ վերաբնակեցվելուց, ապա 1828 թվականին Արեւելյան Հայաստանի կազմում Ռուսաստանին միանալուց հետո հայերի թիվը գերակշիռ դառնալուց հետո՝ 1918 թվականի դրությամբ, Նախիջևանի հայ բնակչության մեծ մասը խոսում էր 1828 թվականից տարածքում հաստատված վերաբնակների խոյի եւ Մարաղայի բարբառներով:

Ըստ որում՝ Խոյի բարբառով խոսում էր 33 բնակավայր՝ Շարուր գավառի Նորաշեն ավանը, Ալաքլու, Դաշարիս, Թագագյուղ, Խանլուխար, Կարմազյար, Քեշտազ գյուղերը, Ճահուկ գավառի Շահապոնք քաղաքը, Ճահուկ ավանը, Առինջ, Բաբոնք, Գյոմուր, Խալխալ, Կժաձոր, Նորս, Նորս-Մագրա գյուղերը, Երնջակ գավառի Արագին եւ Կզնուք գյուղերը, Նախճավան գավառի Ալազդու-Մագրա, Դիդուկար, Եմխամա, Խալիլու, Կարախանբեկլու, Կուլիբեկ Դիգա, Երնջակ

բնակավայր՝ Նախճավան գավառի Ազնաբերդ եւ Ճահուկ գավառի Օծոփ (Բաղամլու) գյուղերը, Արցախ-Սյունիքի բարբառով՝ 7 բնակավայր՝ Երնջակ գավառի Աբրակունիս, Գյաղ, Նորաշեն, Շահկերտ, Շոռոք եւ Փորադաշտ (Փարադաշտ) գյուղերը, Հյուսիսային Գողթնի միջբարբառով՝ 6 բնակավայր՝



Գողթն գավառի Ռամիս, Փառակա, Մեսրոպավան, Բիստ, Ողոհի (Ալախի) եւ Խուրստ գյուղերը: Բնակչության ներքին տեղաշարժերի հետեւանքով առաջացել էին նաեւ միջխոսվածքներ՝ Ջուլֆայի (Ջուղայի եւ Խոյի), Որդուարի (Ազուլիսի եւ Խոյի):

Ըստ հայ բարբառների ավանդական միահատկանիշ դասակարգման՝ Նախիջևանում առկա էին հայերենի բարբառների «ուս» եւ «լիս» ճյուղերի բարբառներ, ըստ որում՝ «լիս» ճյուղին պատկանում էին Խոյի եւ Մարաղայի բարբառները, իսկ տեղաբնիկ բարբառները պատկանում էին

տանքները (*Ս. Սարգսեանց. Ազուլեցոց բարբառը (զոկերի լեզուն), Մոսկվա, 1883 եւ 3. Աճառեան. Քննութիւն Ազուլիսի բարբառի, Երեւան, 1935*) սպառիչ ուսումնասիրություններ են այս բարբառի հետազոտման ուղղությամբ: Ուշագրավ է նաեւ Մարի Ջաքարյանի՝ համեմատաբար վերջերս հրապարակած «Ազուլիսի բարբառը» մենագրություն-բառարանը, որը լրացնում է նախորդ աշխատանքները, մասնավորապես՝ բառապաշարի առավել մանրակրկիտ ներկայացման առումով:

Մուշեղ Գալշոյան



← էջ 4

1975–1977 թթ. Գալշոյանն աշխատում է «Նաիրի» (այն ժամանակ՝ «Սովետական գրող») հրատարակչությունում՝ որպես գեղարվեստական գրականության բաժնի վարիչ: Այդուհետեւ անցնում է բացառապես ստեղծագործական աշխատանքի:

Այն պարբերականներում, որտեղ աշխատել է Գալշոյանը, ցրված են նրա ակնարկներն ու մտորումները: Դրանք եղել են անմիջական արձագանք այն ամենին, ինչն այդ տարիներին կատարվել է հանրապետությունում իր աչքի առաջ: Լրագրային աշխատանքի տարիները նրան տվեցին իրականության համակողմանի իմացություն եւ ամենակարեւորը՝ փաստի ու փաստական նյութի հարուստ պաշարներ:

Լրագրային աշխատանքը Գալշոյանի ստեղծագործական կենսագրության առաջին փուլն է, որին զուգահեռ սկսվում է նաեւ նրա գրական կենսագրությունը: 1969-ին լույս տեսած «Կռուկ» ժողովածուն ըստ ամենայնի պայմանավորված էր գեղարվեստական նյութի, կերպարների ու լեզվի նախնական կուտակումներով: Առաջին գիրքը լույս տեսավ գրողի համար կյանքի բավականին հասուն շրջանում, երբ 36 տարեկան էր: Սա նշանակում է, որ հանդարտ եւ աստիճանական շարադրանքով էր գրողը ծնունդ տվել իր առաջնեկին եւ չէր շտապել արագացնելու այդ ծնունդը: Դրանից հետո նա հրատարակեց «Ծաղկած քարեր» (1973) ակնարկների եւ պատմվածքների ժողովածուն, «Բովտուն» վեպը (1974), իսկ «Մարութա սարի ամպերը» ժողովածուն լույս տեսավ հետմահու՝ 1981-ին, եւ նույն թվականին էլ արժանացավ Հայաստանի պետական մրցանակի: Մինչ այդ՝ 1973-ին, Գրողների միության սահմանած գրական առաջին մրցանակի էր արժանացել «Բովտուն» վեպը: «Դրուժբա նարոդով» ամսագիրը (1978, թիվ 1) իր էջերում տպագրված «Մարութա սարի ամպերը» պատմվածաշարի երկու գործ արժանացրել էր «Տարվա լավագույն պատմվածք» մրցանակին:

Գալշոյանն ապրում էր եռանդուն գրական-ստեղծագործական կյանքով: Նրա բեմագրերով նկարահանվել են «Հնավանդ թմբուկը», «Բովտուն», «Ձորի Միրոն» գեղարվեստական շարժանկարները: Ապրած տարիներին նրա ստեղծագործությունները լույս են տեսել նաեւ այլ լեզուներով. ռուսերեն՝ «Ձորի Միրոն» (Մոսկվա, 1972), «Քարե հովտում» (Մոսկվա, 1977), «Ծաղկած քարեր» (Երեւան, 1977), լիտվերեն՝ «Ձորի Միրոն» (Վիլնյուս, 1977), բուլղարերեն՝ «Բովտուն» (Սոֆիա, 1978):

Գրողի առաջին ակնարկը տպագրվել է 1959-ին Թալինի շրջանային թերթում: Վերջին գիրքը լույս է տեսել 1981-ին:

Շարունակելի

Դավիթ ԳԱՄԴԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

→ էջ 8

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՅԿԱՆՑԱՆ (1830–1892)

← էջ 6

Իսկ «Հայի վիշտը» բանաստեղծության մեջ նա բերել է թուրքերի դեմ կռվող ռուս զորաբանակներին միանալով հայրենիքն ազատագրելու եւ թուրքական բռնատիրական լուծը թոթափելու անհրաժեշտության այլ հիմնավորում։

Թե թուր վերցնեինք՝ մեզ պիտ մորթեին,
Ոչ ոք պիտ պաշտպան ելներ խեղճ հային,
Երբ որ լուռ կեցանք մենք խոհեմաբար,
Ասին. «Մեռել եք հոգեպես իսպառ»:
Ինչ անենք, ուրեմն, ինչպես փրկվիմք,
Մեզ հալածողեն մենք որտե՞ղ փախչինք
(1, 150):

Հայության անելանելի վիճակն այսպես է մեկնաբանել «խոհեմաբար լռելուց» հուսահատված բանաստեղծը եւ «Ազատ երգերում» ու նրանից հետո գրած բանաստեղծություններում ավելի է շեշտել ազատագրական պայքարի անհրաժեշտությունը։

Մի փոքր ավելի ուշ՝ 1891 թ., Մ. Աբիմյանին գրած նամակում Պատկանյանը կատարել է հայության համար ստեղծված քաղաքական բարդ իրադրության սթափ վերլուծություն՝ բացատրելով նաեւ համակերպության ու «ավելորդ զգուշավորության» հետեւանքով «ազգովին կորստյան» հնարավոր վտանգը։ «...առջեւից 300 000 մարդակիրք եւ սպառազեն թշնամի, հետեւից 200 000, իսկ նոցա մեջ միայն 20 000—50 000 անկիրք, անփորձ, գծուծ զինվորած անձնագրի հայ պատերազմողներ... եթե լռենք, մեր բարոյական, թեւեւ դանդաղ մահը անխուսափելի է, իսկ եթե ոտքի կանգնենք, ազգովին պիտի մորթվինք»։ Այս իրավիճակում անգամ, գիտակցելով հանդերձ «միթե սպանդանոց վազելը քաջություն է», Պատկանյանը կողմնակից է թշնամու դեմ զինված պայքարով «ազգի հանդեպ պարտքը» կատարելուն եւ մնացածը «նախախնամությանը թողնելուն»։

Հայության մեջ միշտ էլ եղել են ու կլինեն ազնիվ քաջամարտիկներ, ինչպես «Վանեցի կտրիճ» բանաստեղծության «սարեր կործանելու», «սուր ակռաներով երկաթ ծամելու» պատրաստ վանեցի ամրապինդ հերոսը, որը գիտակցորեն է արժեւորում հայրենիքի ազատությունը եւ ի անսահման ուժով պատրաստ է ամեն զոհողության։

Հագիվ լրացավ քրտանմեկ տարիս,
Աղվամազ բուսավ երես ու ծնոտիս.

Թշերես կարմիր վարդեր կըկաթի,
Ջիլերս ամուր՝ ասես երկաթի:

Տվեք ինձ սարեր՝ սարեր կործանեն,
Ծառը արմատով գետինն հանեն,
Սուր ակռաներովս երկաթ կըծամեն...
Մեջքս այսքան ուժ, ասեք ինչ անեն:

Իմ պես բյուրեղով լի է Հայաստան,
— Նըրա սուրբ հողին ըլեն ես դուրբան —
Մարմինը ուժեղ, առույգ է Հային,
Այլ, ափսոս, թմբդած է նրա հոգին:

Թե մի օր զարթի նորա վեհ հոգին,
Նա պարզ կըցուցնե օսմանի ազգին,—
Ո՛վ էր երկուսեն ստրուկ եւ կամ տեր...
Ա՛խ, էրբ պիտ թընդաք, խեղճ հայի սըրտեր
(1, 125):

«Ազատ երգերով» Պատկանյանը փութացնում էր հայի թմբած, սակայն վեհ հոգու զարթոնքը։ Շարքի բանաստեղծություններում գերակշռող են Վան-Վասպուրականին նվիրված երգերը, որովհետեւ Պատկանյանը Վանին մեծ կարեւորություն էր տալիս Հայաստանի ազատագրության գործում ու առանց Վանի ու վանեցու չէր պատկերացնում Արեւմտյան Հայաստանը։ Իր համոզումը նա ձեւակերպել է այսպես. «Վանը որ կա, այսօրվա հայի ազգության միակ ապաստարանն է. եթե երբեւիցե Տաճկահայաստան ազատություն պիտի ստանա, այդ ազատությունը, անշուշտ, Վանի մեջ պիտի լինի. ես այն չեմ ասում, թե Վանը հայերի ամենահին եւ ամենահարազատ հայրենիքն է. Վանը հայերի ձեռքեն կորավ, այնուհետեւ հայոց ազգին իսպառ եւ անվերադառնալի կորած համարե» (3, 214):

Այս գիտակցությունն ունի վանեցի կտրիճը, նրա պես քաջեր «բյուրեղով լի է Հայաստան», ուրեմն՝ հայ երիտասարդությունը թոթափել է անցյալի կաշկանդվածությունը եւ պատրաստ է գալիք փորձություններին։ «Երդումն», «Ո՛չ խնդիր, ո՛չ հրաման», «Տասնաբանյա պատգամք Հայաստանի», «Հանգանակ Հայաստանի», «Առյուծի սթափումը», «Տաճկահայերի օրհաս», «Հայ զինվոր», «Հոյս», եւ այլ բանաստեղծություններ հավաստում են, որ իրոք «Երկունքի մեջ է Հայաստան աշխարհի», եւ նրա ազատության հույսը հեռու չէ։ Իսկ Պատկանյանի ազատատենչ գաղափարները ազգային միասնության եւ ինքնագիտակցության վերելքի պայմաններում հայ համայնության մեջ ունեին բավական ամուր կենսական հենարան։

Հայաստանով մեկ հայ մարդն այլեւս չպիտի ապավինի «կույր, խուլ ու համառ» թուրքի ողորմածությանը եւ նրանից «շնորհ ու գութ» այլեւս չպիտի աղերսի։ Արդեն գերակա է այն գիտակցությունը, որ հայերս թեւեւ դանդաղ ենք ու համբերատար եւ թուրքին երկար անօգուտ ծառայելուց ուշ ենք զգաստացել, բայց «մեռած չենք» ու անմիաբան, Հայաստանի ազատագրության գաղափարի շուրջ թուրքի դեմ միավորված են թե արեւելահայերը, թե արեւմտահայերը։

Եռսուն հազար զենք ունի գեթունցին,
Որ կարծե քուկիդ հարյուր հազարին,
Արցախեն կուգա մեր քաջ այրուձին՝
Հիշեցնել օրերն Կարմիր Վարդանին
(1, 135):

Ժամանակը հրամայաբար թելադրում էր «թմբած հոգիների» զարթոնք, դարերով քնած առյուծի սթափում, անմահանց կամքով ազգային կենսունակ ուժերի համախմբումով հարվածող բռնունքի ստեղծում, եւ հայրենիքի փրկությունը մոտ է։


Հայ մարդ՝ պըստիկ ծիգ, էլի պըստիկ գրոհ,
Ջարդ-բուրդ արւմ, մի կորցնիր հոյսս,

հավատ,

Էլի փոքր-ինչ մահ, էլի փոքր-ինչ գոհ,
Եվ... սուրբ Հայաստան կըկանգնի ազատ
(1, 206):

Պատկանյանը չի բավարարվել ավանդական երգիծանքի խիստ միջոցներով՝ սարկազմով կամ հեգմանքով։ Երբեմն էլ դիտմամբ մա «խախտել» է բարեկրթության նորմերն ու դիմել նույնիսկ ոչ գեղագիտական արտահայտչամիջոցների՝ խոսքն առավել ներգործուն դարձնելու նպատակով գործածելով ժողովրդական պարսավանքի ամենասուր եւ սթափեցնող բանադարձումները։ «Հայերուս թուրք» բանաստեղծության մեջ նա գործածել է տարածված այդ արտահայտչամիջոցներից մեկը, որով ջանում էր զգաստացնել, սթափեցնող ապստակի գործությամբ «դարձի բերել» օտարներին ծառայող, հայրենիքի շահը եւ իրենց մարդկային պարտքը մոռացած հայերին։

«Մյուլք, փող ու ապրանք» շատ ունեցող, «խելք, հաշվով» մեծահարուստ վաճառականը պիտի արժանանա «հայերուս թուրքին», եթե նրա հարստությունից «շահ չունի Հայաստան»։



Դուն խելք, հաշվով վաճառական ես,
Մյուլք, փող ու ապրանք, գիտեն, շատ ունես.—

Բայց թե փողեդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, փողիդ ալ վըրան:

Քաջ ու մեծանուն, հաղթող զինվորականը, եթե ծառայել է միայն օտարներին, պիտի արժանանա համաժողովրդական պարսավի։

Քաջ ես, լսել ենք, ինքը մեծավոր,
Անուն հաղթողի ունիս փառավոր.

Բայց թե թըրեդ շահ չունի Հայաստան,
Թքել ենք քու ալ, թըրիդ ալ վըրան:


Իր բոլոր կարողություններով հայ մարդը «օրորանեն մինչեւ գերեզման» պետք է նպաստի նրա ազատությանն ու բարեշինությանը, այլապես կորած է հայրենյաց համար։ Մեծաքանակ աշխարհառչակ հեղինակը՝ իր գրչով, բանուկ ու ճարտար ձեռքերով ճարտարագետը՝ իր մտքով ու հայտնագործություններով, հզոր ճարտասան քարոզիչը՝ իր լեզվով, բարձր ուսում առած գիտնականը՝ իր գյուտերով, եթե չեն գործում ի շահ Հայաստանի, միշտ պիտի արժանանան «հայերուս թուրքին», մերժմանն ու անարգանքին, եւ ընդհակառակը, իրենց ազգային ու մարդկային պարտականությունները ծանաչողներն ու բարեխիղճ կատարողները՝ «ազնիվ մարդոց կարգը դրվելու», պատվի ու հավիտենական հարգանքի։

Կուտամ քեզ պատիվ, կունենաս դու հարգ,
Ու քեզ կըղընեն ազնիվ մարդոց կարգ,
Երբ օրորանեդ մինչեւ գերեզման
Միակ ձգտումըդ լինի Հայաստան (1, 125):
Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Նախիջևանի բարբառների համապատկերը



← էջ 7

Դասական բարբառագիտությունը ժամանակին ուսումնասիրել է նաեւ Արարատյան, Ջուղայի, Արցախի, Խոյի, Մարաղայի բարբառները։ Ընդ որում՝ Ջուղայի եւ Մարաղայի բարբառները կրկին ուսումնասիրել է հայ լեզվաբանության, մասնավորապես՝ բարբառագիտության մեծ երախտավոր Հրաչյա Աճառյանը իր «Քննութիւն Նոր Ջուղայի բարբառի» եւ «Քննութիւն Մարաղայի բարբառի» աշխատանքներում։

Արցախ-Սյունիքի բարբառը «Լեռնային Դարաբաղի բարբառային քարտեզը» աշխատանքով ուսումնասիրել է Կարեն Դավթյանը։ Իսկ Սյունիքի խոսվածքների առումով ուշագրավ է Ալեքսանդր Մարգարյանի «Գորիսի բարբառը» մենագրությունը։ Հայ բարբառագիտության վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններում (Արարատ Դարբյան, Ահարոն Գրիգորյան, Սիրանուշ Բաղդասարյան-Թափալցյան եւ այլք) մեծ տեղ են գրավում Արարատյան բարբառին նվիրված բաժինները։ Դասական բարբառագիտության մեջ Աստապատի բարբառը համարվել է Արարատյան բարբառի ենթաբարբառ։

Նախքան շահաբաւյան բռնագաղթը Արարատյան բարբառը տարածման առավել ընդգրկուն սահմաններ է ունեցել Արարատյան դաշտը եւ Արաքսի հովիտը ներառյալ, ինչի ապացույցներից է նաեւ Նախիջևանի տարածքում պահպանված հիշյալ չորս բնակավայրերի, ինչպես նաեւ

Արաքսի իրանյան ափում գտնվող Դարաշամբ գյուղի խոսվածքները։ Ի դեպ՝ Նախիջևանի տարածքին մերձակա Արարատի մարզում նույնպես պահպանվել են տեղաբնիկ Արարատյան բարբառի խոսվածքներ (Արարատ, Այգավան գյուղեր)։

Շարունակելի

Արտակ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՆՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային,
լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ (010) 517 280

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 16.02.2021 թ.

Տպաքանակը՝ 1175